ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 08

**ԱՐՏԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ «ԿԱՌՈՒՅՑ» Ա/Կ -Ի ՄԻՋԵՎ 18 ՄԱՐՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՀ-ԲՄԱՇՁԲ-24/122 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿՆՔՎԱԾ «ՀՀ *ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ԽՍԱԿՈՎ ԵՎ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԱՅԳՈՒ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ* » ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ N ԱՄԱՀ-ԲՄԱՇՁԲ-24/122 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Արտաշատ «10» հուլիս 2026թ.

«Արտաշատի համայնքապետարան»-ը, ի դեմս համայնքի ղեկավար Կառլեն Մկրտչյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Կառույց>> Ա/Կ-ն, ի դեմս փոխտնօրեն՝ Ռուբեն Սարգսյանի, որը գործում է կոոպերատիվի կանոնադրության հիման վրա /այսուհետ՝ Կապալառու/ մյուս կողմից, այսուհետև Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և հիմք ընդունելով 2024 թվականի մարտի 18-ին կնքված N ԱՄԱՀ-ԲՄԱՇՁԲ-24/122 գնման պայմանագրի /այսուհետ Պայմանագիր/ 8.5 կետը, պատասխանատու ստորաբաժանման «10» հուլիսի 2026 թվականի արտահերթ նիստի արձանագրությամբ կայացած որոշումը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 742 հոդվածը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Արտաշատի համայնքապետարանի կարիքների համար ԱՄԱՀ-ԲՄԱՇՁԲ-24/122 ծածկագրով «***ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի այգիների, պուրակների կառուցում /բարեկարգում, վերանորոգում/» շինարարական աշխատանքներ կատարում Արտաշատ քաղաքի Արարատյան փողոցի այգու բարեկարգման աշխատանքներ***» պայմանագրի կատարման և գործողության ժամկետները կասեցնել մինչև նախագծանախահաշվային փաստաթղթերում փոփոխությունների կատարումը:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում կնքման պահից, որը գործում է մինչև կողմերի կողմից պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ավարտը և հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը:
2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի կողմից պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:
2.3. Սույն համաձայնագիրը կազմված 1 /մեկ/ էջից, հայերեն լեզվով, 2 /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և տրվում են կողմերին:

## 3.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Արտաշատի համայնքապետարան
Հասցե՝ Ք. Արտաշատ Օգոստոսի 23/62
ՀՎՀՀ՝ 04240737
Բանկ՝ ՀՀ ՖՆ Գործառնական Վարչություն
Հ/Հ՝ 900412151517
Համայնքի ղեկավար՝ Կ. Մկրտչյան

-------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

<<Կառույց>> Ա/Կ
Ք.Արարատ, Կոմիտաս 2/39
հհ 11500604982549
<<ԱՄԻՕ ԲԱՆԿ>>ՓԲԸ
հվհհ 04100723
Փոխտնօրեն՝ Ռ. Սարգսյան

-------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ